ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Երկրաբանություն և աշխարհագրություն **52**(2), 2018 ***Геология и география***

Աշխարհագրություն

УДК 911.3.001

ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Ռ. ԱՎԱԳՅԱՆ *

ԵՊՀ սերվիսի ամբիոն, Հայաստան

Շրջակա միջավայրի վրա տուրիզմի բացասական ազդեցությունը մարդու և հասարակության բացասական գործունեության հետևանք է: Մարդասիրական սկզբունքների ազդեցությունը կհանգեցնի այդ ազդեցության նվազմանը, ինչն էլ կօժանդակի տուրիսմ–էկոտուրիզմ–կայուն տուրիզմ համակարգի անցմանը: Հոդվածում ցույց է տրված, որ այս համակարգը ապահովում է հասարակության կայուն զարգացումը:

***Keywords*:** tourism, ecology, sustainable development, society.

Տուրիզմը տնտեսության ամենաարագ զարգացող ոլորտներից մեկն է: Մեծ է նրա դերը մարդկանց հանգստի կազմակերպման, առողջության վերականգման գործում: Տուրիզմը նպաստում է մեծացնել աշխատուժի զբաղվածությունը, ավելացնել եկամուտները, բարձրացնել ենթակառուցվածքների օգտագործման արդյունավետությունը, ստեղծել նորերը: Այն օգնում է տարածաշրջանի սոցիալ-տնտեսական ողջ համակարգի զարգացմանը, միջշրջանային, միջպետական և միջմշակութային կապերի հաստատմանը, համամարդկային արժեքների հետ հաղորդակցության զարգացմանը:

Ոլորտի արագ զարգացումը բերում է նաև մի շարք բացասական հետևանքներ՝ աղտոտվում է շրջակա միջավայրը, որից տուժում են մարդկանց առողջությունը, կենդանական և բուսական աշխարհը, անկազմակերպ տուրիզմը մեծ վնասներ է հասցնում մշակութային ժառանգության արժեքներին, խախտում բնիկների դարերով ձեռք բերած ինքնապահպանման համակարգը և առաջանում է ընդհանուր էկոլոգիական վիճակ իր երեք հիմնական բաղադրիչներով՝ մարդու (անձի) էկոլոգիա, բնության (բնական միջավայրի) էկոլոգիա, հասարակության (հասարակական միջավայրի) էկոլոգիա:

Աշխարհն այսօր գնում է կայուն զարգացման, իսկ կայուն զարգացման և ընդհանրապես մարդկության առաջընթացը ենթադրում է "Անցում բնության հավասարակշռված օգտագործմանը, որտեղ բնության վրա մարդու

* E-mail: aavagyan@ysu.am

ազդեցության բոլոր բաղադրիչները համապատասխանեցված է բնության համակարգերի կողմից անթրոպոգեն բեռ կրելու կարողության հետ” [1]:

Կայուն զարգացման, մարդկության առաջընթացի խնդիրներից մեկն ընթացքում առաջացող էկոլոգիական վիճակի լուծումն է: Ինչպես նշվում է 2002 թ.-ին Յոհաննեսբուրգում անցկացված կայուն զարգացման համաշխարհային գագաթնաժողովում “Կայուն զարգացում” նշանակում է՝

• ներկա սերնդի պահանջմունքների բավարարումը չպետք է վտանգի ապագա սերնդի պահանջմունքների բավարարումը;

• էկոլոգիան վաղվա տնտեսությունն է [2]:

Տուրիզմի առաջնային խնդիրն է չխախտել շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը, իսկ լուծման միակ միջոցը՝ տուրիզմին էկոլոգիական ուղղվածություն տալն է (էկոտուրիզմի զարգացումը): Ըստ “Վայրի բնության համաշխարհային ֆոնդի (World a Wida Dound for Natura)” էկոտուրիզմը ճամփորդություն է դեպի բնություն՝ պատկերացում կազմելու բնության և մշակութային ազգագրական առանձնահատկությունների մասին, առանց խաթարելու էկոլոգիական համակարգի ամբողջությունը [3]:

Բովանդակային առումով առանձնացվում են էկոտուրիզմի երեք հիմնական տեսակներ՝ ճանաչողական, ռեկրեացիոն, գիտական (Ռինդաչը, [4]):

Ճանաչողականն էկոտուրիզմի ավանդական ձևն է, որն իր էությամբ ավելի պարզ, անմիջական և կարճատև է: Այստեղ հիմնականը տեսողականն և զգայականն են՝ տեսնել, զգալ, խորհել և լավ տպավորություններով հեռանալ: Ռեկրեացիոն էկոտուրիզմն ավելի խորն է, բովանդակային: Գլխավորն այստեղ մարդու հանգստի կազմակերպումն և առողջության վերականգնումն են: Գիտականը տանում է դեպի մտավոր դաշտ, որտեղ տուրիստը մասնակցում է գիտահետազոտական ծրագրերին, որի արդյունքում ավելի ուժեղ են դրսևորվում մարդու մտավոր կարողությունները և նա ավելի պատասխանատու է դառնում իր գործունեության բացասական հետևանքների համար:



Նկ. 1: Էկոտուրիզմի համակարգի կառուցվածքը:

Էկոլոգիական տուրիզմն իր կառուցվածքով, առաջացման դրդապատճառներով մեկ ամբողջական համակարգ է (նկ. 1), որի պատճառահետևանքային կապերի, նրանց միավորման զարգացման և փոփոխության հիմքում մարդասիրական արժեքներն են: Դրանք օգնում են ավանդական տուրիզմի զարգացումը դիտարկել էկոլոգիական խնդիրների լուծման, կայուն տուրիզմի ստեղծման համատեքստում, այսինքն՝ այն պետք է օպտիմալ ձևով օգտագործի շրջակա միջավայրի ռեսուրսները, որոնք տուրիզմի զարգացման կարևոր բաղադրիչներն են՝ պահպանելով կարևորագույն բնապահպանական գործընթացները, բնական ժառանգությունը և կենսաբազմազանությունը:

Էկոլոգիական ճգնաժամի լուծումը պետք է բխի անձի, հասարակության և բնական միջավայրի շահերից: Այն առաջին հերթին (մարդու) հոգու ճգնաժամն է, հոգևոր և բարոյական արժեքների կորուստը, բնության նկատմամբ անտարբերությունը, հասարակական հարաբերությունների վատթարացումը, որոնց պատճառով հեշտությամբ ավերվում է ոչ միայն կենսոլորտը, այլ նաև նոոսֆերան՝ հոգևոր արժեքները, բարոյականությունն և մշակույթը [5]:

Հետևաբար էկոլոգիական ճգնաժամի լուծումը պետք է սկսել հումանիստական սկզբունքներից, հոգու այլակերպումից: Միայն հոգևոր բարոյական բարձր մակարդակը կառողջացնի հետընթաց ապրած մարդուն և բնությանը:

Հոգու արժեքավորման հիմքում հավատքն է: Հավատքը մարդուն հոգեպես մաքուր պահելու միակ միջոց է և այն գլխավոր ուժը, որը մարդուն տալիս է ապրելու, ստեղծելու իր նմանների հետ մարդկային հարաբերություններ հաստատելու ուժ (նկ. 2):



Նկ. 2: էկոլոգիական տուրիզմի առաջացման պատճառը:

Ա–Բ՝ անձի էկոլոգիա;
Բ–Գ՝ բնական միջավայրի էկոլոգիա;
Գ–Ա՝ հասարակության էկոլոգիա:

Ինչպես Վ.Ի. Վերնադսկին է նշում. “Կրոնը բարձրացնում է հոգու այնպիսի բարձրություններ և խորություններ, որ գիտությունը չի կարող”: Կրոնը կոչված է պատասխանելու այն հարցին, թե որն է կյանքի իմաստը [5]:

Հավատքն ավելի արժեքավորում է հոգևորը, բարոյականը, հումանիզացնում մարդուն. մարդասիրությունը մարդու որակական հատկանիշն է, ինչի միջոցով էլ մարդն իր վերաբերմունքն է ցույց տալիս շրջակա միջավայրին: Միայն հավատքի հզոր ուժով, բարոյական սկզբունքներով օժտված մարդը կարող է տեսնել ու զգալ շրջապատի բոլոր այն երևույթները, որոնք նյութական “արժեք” չեն ներկայացնում [6]:

Հավատքը երկնայինի և երկրայինի կապն է, մարդկությանը դեպի հավերժություն տանող միակ ուղին: Հավատքը բաձրացնում է մարդու կուլտուրան, որն մղում է գործունեության: Ինչպես Ն. Շնորհալին է գրում. “Մեռած է այն հավատքը, որին չեն հետևում գործերը” [7]:

Հավատքը մարդու գործունեությանը տալիս է հումանիստական բովանդակություն, իսկ հումանիզմը՝ գործնական հումանիզմը դառնում է անհատի և հասարակության, մարդակային և հասարակական շահերի հարաբերակցություն:

Այն նաև մեկ ընդհանրության մեջ է տեսնում մարդու, հասարակության և շրջակա միջավայրի էկոլոգիական խնդիրների լուծումը, իսկ էկոլոգիան ընդհանրացված ձևով մարդու և բնության ամեն մի փոխներգործության կամ տնտեսական գործունեության հետևանքով միջավայրի վատթարացումն է: Վերջինիս արդյունքում բնության ներդաշնակության խախտումն է, մարդու առողջության հոգևոր-հոգեբանական, բարոյական արժեքների կորուստը, հասարակական հարաբերությունների վատթարացումը:

Էկոլոգիական խնդիրների լուծման մարդասիրական սկզբունքների ձևավորման և կիրառման նախասկիզբը մարդու դաստիարակությունն է: Դեռևս Հին Չինաստանում կոնֆուցիական գաղափարախոսության մեջ մարդը դիտվում է որպես դաստիարակության արդյունք:

Դաստիարակությունը մարդուն տալիս է մարդկային կերպար, հղկում է մարդու հոգին, մաքրում բացասական գաղափարներից, լիցքավորում դրական մարդկային, համամարդկային, տիեզերական արժեքներով: Դաստիարակված մարդը հզոր է իր մտավոր կարողություններով, որոնց միջոցով կերտում է ապագան:

Դաստիարակությունն առաջացնում է ինքնուրույնություն, վճռականություն, հաստատակամություն, կարգապահություն, նպատակասլացություն համարձակություն, այսինքն այն ամենը ինչ որ անհրաժեշտ է տուրիզմի կազմակերպիչին:

Դաստիարակված, կարգապահ կազմակերպիչը սկսում է իր կամային գործունեությունը, որն ընդգրկում է երեք փուլ.

ա) գործունեության նպատակի գիտակցում;

բ) նպատակին հասնելու ուղիների և միջոցների քննարկում;

գ) որոշման ընդունում [8]:

Կամային գործունեության շարժառիթներից է պահանջմունքը, որը մարդու մոտ առաջացնում է այն բավարարելու ձգտում և իր հերթին բերում է նպատակադրում, նպատակին հասնելու կամք: Կամքն արդեն արդյունք է ոչ միայն դաստիարակության, այլ նաև կրթվածության, որի մակարդակը որոշում է մշակույթի չափը: Ինչպես նշում է Մ. Վեբերը "Ամեն տեսակի սոցիալ-տնտեսական երևույթների էությունը որոշվում է ոչ միայն նրանց օբյեկտիվ կողմերով, այլ ավելի շատ այն մշակութային նշանակությամբ, որ տալիս է հետազոտողը տվյալ երևույթին" [9]:

Կրթվածությունը և մշակույթը հնարավորություն են տալիս ընկալել երևույթների փոխառնչությունները, նրանց տարածաժամանակային փոխկապակցությունները: Բ. Թերների կարծիքով՝ կրթված մարդուն անհրաժեշտ է հասկանալ գլխավորապես կենսոլորտի և սոցիալական ոլորտի հիմնարար տարրերը՝ ներառյալ նրանց տարածքային տարբերակումը [10]:

Կրթված և կուլտուրական մարդը ի վիճակի է ընկալել բնության և բնականի էությունը, նրա նկատմամբ քաղաքակիրթ վերաբերմունքը: Մարդկային ինտելեկտը որքան հեռու, այնքան ավելի է դառնում քաղաքակրթության ստեղծագործման արարման հզոր ուժ:

Այլ մշակույթներին բնական միջավայրի յուրահատկությունների հաղորդակցվելը մարդուն ավելի է կապում բնության հետ, սեր առաջացնում

նրա նկատմամբ: Ինչպես Վ. Սպինոզան է գրում. “Մարդկային բնավորությունն ըմբռնում է բնության էությունը, մեծանում է նրա նկատմամբ հոգատարությունը, մարդն ավելի է մոտենում իր ծագման արմատներին, իր էությունը տեսնում է բնականի և բանականի ներդաշնակության մեջ” [9]: Այս ներդաշնակության համակարգում բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և փոխպայմանավորում են միմյանց և իրենց գործունեությամբ հենվում են բարոյական, հոգևոր հոգեբանական՝ մարդասիրական սկզբունքների վրա [11]:

Մարդասիրական սկզբունքներն ապահովում են հասարակության ներդաշնակ զարգացումը: Ինչպես Ա.Ա. Կրուբերն է գրում. “Հասարակության առաջընթացի էությունը ոչ թե արտադրության զարգացման մեջ է, այլ մարդու էության ուղեղի զարգացման մեջ”, ըստ որի էլ բանականությունն ավելի ու ավելի շատ է սկսում կառավարել աշխարհը [12]:

Մարդասիրական սկզբունքների վրա ժամանակի և տարածության մեջ ձևավորվում է էկոտուրիստական համակարգը: Ժամանակի գործոնը էկոտուրիստական համակարգը դիտում է իր դինամիզմի և զարգացման մեջ: Խնդիրը զարգացման գիտական մեխանիզմի բացահայտումն է, որն իր հերթին հնարավորություն կտա զարգացման նպատակային ուղղության վրա դնել համակարգի ամբողջ կառուցվածքի առանձին բաղադրիչների փոխկապակցությունների փոփոխությունների ընթացքը, ուղղորդելով դեպի կայունություն:

Տարածքային գործոնն էկոտուրիստական համակարգը կապում է բնական և հասարակական մյուս բաղադրիչների հետ, որն էկոտուրիստական համակարգին նոր որակ է տալիս և առաջնորդում է դեպի կայուն մարդկային զարգացում:



Նկ. 3: Էկոլոգիական տուրիզմի առաջացման դրդապատճառները:

A–B՝ մարդու հոգևոր բարոյական արժեքների կորուստն է;
B–C՝ բնության նկատմամբ անտարբերությունը;
C–A՝ հասարակական վատթար հարաբերությունները:

Այսպիսով, էկոտուրիստական համակարգը ժամանակի և տարածության մեջ որակական փոփոխությունների շնորհիվ ինտեգրվում է սոցիալ-տնտեսական զարգացումների հետ, հիմք հանդիսանալով հումանիստական արժեքների վրա հենված հասարակական կյանքի կայուն զարգացման համար:

Էկոլոգիական տուրիզմի և կայուն զարգացման ամբողջ ընթացքը երևում է գծապատկերներում (նկ. 2–5):

Այս եռամիությունում ամեն ինչ սկսվում է անձի էկոլոգիայից, որի հետևանքը շրջակա բնական միջավայրի էկոլոգիան է, իսկ էկոլոգիան բնական միջավայրում ձևավորում է վատառողջ էկոլոգիապես հիվանդ հասարակություն: Էկոլոգիան ընդհանուր վիճակի կարգավորումը կարող է լուծվել տուրիզմի (էկոտուրիզմի) միջոցով: Այն իրագործելու համար անհրաժեշտ է բացահայտել և գնահատել էկոլոգիական իրավիճակ ստեղծող դրդապատճառները (նկ. 3):



Նկ. 4: Էկոլոգիական տուրիզմի առաջացման և ձևավորման դրդապատճառների փոխկապակցվածությունը:



Նկ. 5: Էկոլոգիական խնդիրների լուծման ուղիները և ակնկալվող արդյունքները:

Էկոլոգիական տուրիզմի գիտական մեխանիզմի բացահայտման համար անհրաժեշտ է մեկ ընդհանրության մեջ դիտել էկոլոգիական տուրիզմի առաջացման և ձևավորման դրդապատճառների փոխկապակցվածությունը:

Որտեղ՝

1. անձի էկոլոգիայի դրդապատճառը մարդու հոգևոր-բարոյական արժեքների հումանիստական սկզբունքների կորուստն է. մարդու տիեզերական մարդկային բովանդակության կորուստը;

2. հոգևոր-բարոյական արժեքներից զրկված մարդու գործունեության հետևանքով մեծ վնասներ են հասցվում բնական միջավայրին բերելով էկոլոգիական աղետ;

3. բնական միջավայրի էկոլոգիայի դրդապատճառը մարդու կողմից բնության նկատմամբ անտարբերությունն է, մարդու սպառողական հոգեբանությունը, “Ես”-ի գերակա մտածելակերպը;

4. բնության նկատմամբ անտարբերությունն արդյունք է էկոլոգիապես հիվանդ հասարակության;

5. հասարակական միջավայրի էկոլոգիայի դրդապատճառը վատթար հասարակական հարաբերություններ են, հասարակության անդամների միջև բևեռացումը, իր “Ես”-ին հասցվող “վիրավորանքը” հասարակության վրա բարդելու մտածելակերպը;

6. էկոլոգիապես հիվանդ վատառողջ հասարակությունում ձևավորվում է հոգեպես վատառողջ բարոյական ցածր մակարդակ ունեցող անձ:

Հետևապես անձի, բնության և հասարակության էկոլոգիան մեկ միասնական համալիր են և նրանց լուծումը կարելի է ստանալ համալիրային մոտեցման միջոցով: Ըստ որի տրված լուծման ուղիները և ակնկալվող արդյունքները կարելի է դիտարկել մեկ ընդհանրության մեջ (նկ. 1):

Որտեղ՝

1. դաստիարակության միջոցով հումանիստական արժեքներով առաջնորդվող անձի ձևավորումն է;

2. մարդասիրական արժեքներով օժտված անձը կարող է հոգատար վերաբերմունք ունենալ բնության նկատմամբ;

3. բնության նկատմամբ հոգատարությունը հնարավորություն կընձեռնի վերականգնելու բնական միջավայրի ներդաշնակությունը;

4. հասարակության հարաբերությունների բարելավումը իր հերթին կարող է նպաստել վերականգնելու բնական միջավայրի ներդաշնակությունը;

5. հասարակական հարաբերությունների բարելավումը կարող է նպաստել նաև կայուն հասարակության կայուն տուրիզմ ստեղծելու համար;

6. անձի դաստիարակությունը հոգևոր-հոգեբանական բարոյական արժեքներում կարող է բազա հանդիսանալ կայուն տուրիզմի ստեղծման գործոնի համար:

Այսպիսով, էկոտուրիստական համակարգը հումանիստական (մարդկային) սկզբունքների հենքի վրա կազմակերպելը պայմաններ է ստեղծում հասարակական կյանքի տարածքային ձևերի գործունեությունը դնել կայուն մարդկային զարգացման ուղու վրա:

Ստացվել է՝ 07.05.2018

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ավագյան Ա.Ռ.** Հայաստանի Հանրապետության ընդերքի ռեսուրսների աշխարհագրական գնահատումը: 171 էջ:
2. Մարդկային զարգացման հիմունքներ: Եր., 2004, 15 էջ:
3. Экотуризм, экологические туры, новые направления экотуризма в мире (электронный ресурс).
4. **Рындач М.** Основы туризма. М., 2013, 51 с.
5. **Կարապետյան Մ.** Բնությունը և էթիկան: Եր., 2010, 76 էջ:
6. **Ավագյան Ա.Ռ., Ալեքսանյան Գ.Փ.** Քրիստին Բրոգան և ուրիշներ: Կայուն զբոսաշրջության կառավարում, միջմշակութային հաղորդակցություն և կառավարում: Եր., 2014:
7. Ներսես Շնորհալի: Եր., 1982, 8 էջ:
8. **Իգնատև Ե., Լուկին Ն., Գրոմով Մ.** Հոգեբանություն: Եր., 1972, 367 էջ:
9. Փիլիսոփայական բառարան: Եր., 1975, էջ 216, 390, 400:
10. Աշխարհագրության արվեստն ու գիտությունը: Եր., 2007, էջ 36–37:
11. **Ավագյան Ա.Ռ.** Սերվիսագիտության հիմունքներ: Եր., 2017, 184 էջ:
12. **Крубер А.А.** Общее землеведение, 1920, т. 4, № 3, с. 191.

А. Р. АВАГЯН

ОЦЕНКА ГУМАНИСТИЧЕСКИХ ПРИНЦИПОВ ЭКОТУРИЗМА В КОНТЕКСТЕ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

Резюме

Отрицательное влияние туризма на окружающую среду является последствием отрицательной деятельности человека и общества. Применение гуманистических принципов приведет к уменьшению этого негативного влияния на природу, что в свою очередь будет способствовать переходу к системе туризм–экотуризм–устойчивый туризм. В статье показано, что данная система будет способствовать устойчивому развитию общества.

A. R. AVAGYAN

ASSESSMENT OF HUMANISTIC PRINCIPLES OF ECOTOURISM IN THE CONTEXT OF SUSTAINABLE DEVELOPMENT

Summary

The negative impact of tourism on the environment is a consequence of the ecology of human (individual) and society. The application of humanistic principles will give a positive solution to the ecology of human and society, which in turn will create a tourism–eco-tourism–sustainable tourism system. In the article it is shown that this system will contribute conditions for society sustainable development.